Շվեդիա
Sverige

ԵՎՐԱՍԻԱ
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Pathway to

ՏԻՄ-ն ու Երիտասարդը

Երիտասարդների ներառումը և մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին

Ձեռնարկ

ՏԻՄ-ն ու Երիտասարդը

Երիտասարդների ներառումը և մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին

Ձեռնարկ

Ծրագիրն իրականացվում է «Ուղի դեպի» ներառական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության կողմից «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ստեղծողը: Ձեռնարկում արտահայտված տեսակետները/ բովանդակությունը կարող են չհամընկել Շվեդիայի կառավարության տեսակետների հետ:

Սույն ձեռնարկի հեղինակ-փորձագետներն են՝

Վահե Խաչիկյան
Ամալյա Հարությունյան

Սույն ձեռնարկի համահեղինակներ են՝

Նազելի Մկրտչյան
Հարութ Դովլաթյան
Լիլիթ Սարգսյան
Անուշ Կոստանյան
Նունե Հակոբյան
Հայկ Մխիթարյան
Կարեն Մաթևոսյան
Տիգրան Մարգարյան
Տիգրանուհի Մարգարյան
Սոնա Մանուկյան
Միեր Միերյան
Աննա Խաչատրյան
Միեր Գրիգորյան
Մերի Խաչատրյան
Ավետիք Ավետիսյան

«Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագիրն իրականացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Երևան, 2022

Բովանդակություն

Նախաբան **5**

Գլուխ 1: Ի՞նչ է ժողովրդավարությունը: Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ): Մասնակցայնություն **6**

- Ի՞նչ է ՏԻՄ-ը 6
  - Տեղական ինքնակառավարման սկզբունքները 8
  - Համայնքի ավագանին 10
  - Համայնքի ղեկավար 11
  - Վարչական ղեկավար 12
- Ի՞նչ է մասնակցությունը: Մասնակցության ձևեր, մոտեցումներ, Հարթի մասնակցության աստիճանը որպես երիտասարդների մասնակցության մոտեցում .. 12
- ՀԿՏՀ-ները, որպես քաղաքացիների մասնակցության գործիք 17

Գլուխ 2: Կարծրատիպեր, սակավ հնարավորությամբ խմբեր, հաշմանդամություն ունեցող անձինք 19

- Ինչ է կարծրատիպը 19
  - Կարծրատիպային սպառնալիք 22
  - Կարծրատիպերի տեսակները 24
- Ի՞նչ է սակավ հնարավորությունը 27
  - Սակավ հնարավորությամբ խմբերը ըստ Էրազմուս «Ներառում և բազմազանություն» ռազմավարության 27
  - Սակավ հնարավորությամբ խմբեր 28
  - Սակավ հնարվորությունները՝ ըստ 2021-2025թ.-ների երիտասարդական պետական քաղաքականության նախագծի 30
- Հաշմանդամություն ունեցող երիտասարդներ 36
  - Բժշկական մոդել 37
  - Սոցիալական մոդել 38
  - Մարդու իրավունքների վրա հիմնված մոդել 39
  - Էթիկական նորմեր 44

Օգտագործված աղբյուրներ **44**

Նախաբան

Ձեռնարկը ստեղծվել է «Ուղի դեպի» ներառական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «InCamp» ճամբարի շրջանակներում: Ճամբարին մասնակցել են Վայոց ձորի Եղեգնաձոր համայնքի 15 երիտասարդներ, ովքեր ճամբարի ընթացքում տեսական և գործնական դասընթացների շնորհիվ ամփոփել են իրենց գիտելիքները վերոնշյալ ձեռնարկում:

Մասնակիցներից Նազելին և Անուշը նշում են, որ ձեռնարկը կօգնի երիտասարդներին տեղեկանալ, թե ինչ է ՏԻՄ-ը, մասնակցայնությունը, ներկայացնել, թե ինչ խնդիրներ ու դժվարություններ կան, որոնց հանդիպում են սակավ հնարավորություններով երիտասարդները, նպաստել այդ երիտասարդների հանրային կյանքին մասնակցայնությանը, ինչպես նաև ձեռնարկը խթանում է ներառումը երիտասարդների շրջանում, սովորեցնում հրաժարվել կարծրատիպերից և կաղապարված աշխարհայացքից:

Ըստ Տիգրանուհու այսօր առաջնային է երիտասարդների բոլոր խմբերին համապատասխան տեղեկատվությամբ ապահովելը: Ձեռնարկը մեզ կօգնի շեշտադրել սակավ հնարավորություններով երիտասարդներին և նրանց մասնակցայնության առանձնահատկություններին որոշումների կայացման գործընթացում:

Գլուխ 1

Ի՞նչ է ժողովրդավարությունը
Տեղական ինքնակառավարման մարմիններ (ՏԻՄ)
Մասնակցայնություն

Ի՞նչ է ՏԻՄ-ը

Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Տեղական ինքնակառավարումն իրականացվում է ՀՀ տարածքում գտնվող համայքներում:

Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով:



Համայնքի ավագանին համայնքի օրենսդիր մարմինն է, այսինքն կայացնում է որոշումներ, որոնք արդեն գործնականում կյանքի են կոչվում համայնքի ղեկավարի՝ գործադիր մարմնի կողմից:

Եկեք փորձենք համայնքի հնգամյա զարգացման ծրագրի օրինակով դիտարկել համայնքի օրենսդիր և գործադիր մարմինների գործառույթները.

Համայնքն ունի հնգամյա զարգացման ծրագիր, որը սահմանում է, թե առաջիկա 5 տարիների ընթացքում ինչպիսի գործողություններ, միջոցառումներ ու ծրագրեր են իրականացվելու համայնքի կողմից: Այդտեղ նաև սահմանվում է ռեսուրսների հնարավոր աղբյուրները, ժամկետներն ու ակնկալվող արդյունքները:
Համայնքի ղեկավարը համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ենթակայության կառույցների ներգրավմամբ մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և այն ներկայացնում համայնքի ավագանու հաստատմանը: Համայնքի ավագանին կարող է այն ընդունել, կամ մերժել: Կարող է նաև այն ուղարկել լրացումների, կամ ինքն առաջարկել լրացումներ այդ փաստաթղթում:

Ավագանու հաստատումից հետո համայնքի ղեկավարն աշխատակազմի և համայնքային կառույցների աշխատակիցների ներգրավմամբ նախատեսված հինգ տարիների ընթացքում պետք է իրականացնի նախատեսված գործողություններն ու ծրագրերը՝ ապահովելով նախատեսված արդյունքները:

Ավագանին այդ հինգ տարիների ընթացքում պետք է վերահսկի, որ համայնքի ղեկավարն այդ ծրագիրը կյանքի կոչի ըստ նախատեսվածի՝ ապահովելով որակական և քանակական արդյունքներ:

Ահա այս օրինակով կարող եք պատկերացում կազմել, թե ինչպիսի լիազորությունների շրջանակ ունեն տեղական մակարդակի օրենսդիր և գործադիր մարմինները:

Կարևոր է հիշել, որ տեղական ինքնակառավարման մարմինները հաշվետու են միայն բնակիչներին և չունեն վերադաս: Որքան էլ առաջին հայացքից տարօրինակ հնչի, բայց մարզպետարանները տեղական ինքնակառավարման մարմինների վերադասը չեն և այս երկու մարմինների հարաբերություններում չկա հիերարխիա և մեկը մյուսին վերադաս կամ ստորադաս չի կարող համարվել:

Մարզպետարանները (մարզպետները) պետական կառավարման ներկայացուցիչներն են մարզերում: Մարզպետարանները կարծես հանդիսանում են միջնորդ օղակ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման մարմինների միջև:

Եթե մարզպետներին նշանակում և ազատում է ՀՀ Կառավարությունը, ապա համայնքի ղեկավարին և ավագանուն ընտրում են բնակիչներն ուղղակի կամ անուղղակի ընտրության միջոցով՝ տալով նրանց առաջնային մանդատ:

Տեղական ինքնակառավարման սկզբունքները

ՀՀ-ում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության Էական հիմքերից մեկը: Տեղական ինքնակառավարումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1. ընդհանուր իրավասությունը՝ համայնքային շահերին վերաբերող, ցանկացած գործունեության իրականացման իրավունքն է, եթե օրենքով այլ մարմինների դրանք վերապահված չեն.
2. տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով.
3. պետական մարմինների լիազորությունների փոխանցումը տեղական ինքնակառավարման մարմիններին, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում.

4. համայնքի իրավունքների, օրինական շահերի և սեփականության՝ օրենքով սահմանված կարգով պաշտպանությունը.
5. տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ամբողջականությունն ու բացառիկությունը: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացմանը միջամտության դեպքերն ու կարգը սահմանվում են միայն օրենքով.
6. համայնքների սահմանների փոփոխությունների իրականացումն օրենքով սահմանված կարգով՝ հանրային շահերից ելնելով, լսելով համայնքի կարծիքը.
7. տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այլ համայնքների հետ համագործակցելը և միջհամայնքային միավորումներ ստեղծելը.
8. տեղական ինքնակառավարման մարմինների ներքին կառուցվածքների համապատասխանեցումը համայնքային խնդիրների լուծմանը.
9. տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության համաչափությունը.
10. տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համապատասխանությունը.
11. համայնքների բյուջեների ինքնուրույնությունը՝ տեղական ինքնակառավարման մարմինների օրենքով սահմանված

Հեղինակ՝ Տիգրանուհի Մարգարյան

աղբյուրներից համայնքային բյուջե ձևավորելու և սեփական պատասխանատվությամբ այն տնօրինելու հնարավորությունն է.

12. համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման նպատակով ֆինանսական համահարթեցման միջոցով աջակցությունը.
13. տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հաշվետվողականությունը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը.
14. տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը:

Այս սկզբունքներն են, որ ապահովում են տեղական ինքնակառավարման գոյությունն ու կայացումը Հայաստանում և առանց այս սկզբունքների տեղական ինքնակառավարումը արդյունավետ չի իրականացվում: Կարևոր է նաև նշել, որ այս սկզբունքներից որևէ մեկը մյուսի համեմատ չունի գերադասելիություն, կամ ստորադասելիություն:

Համայնքի ավագանին

Ավագանին ընտրվում է հինգ տարի ժամկետով: Նորընտիր ավագանու լիազորությունների ժամկետը սկսվում է առաջին նիստի գումարման պահից և նույն պահից էլ ավարտվում է նախորդ ավագանու լիազորությունների ժամկետը: Ավագանին իր նիստերը գումարում է նստաշրջաններով: Հերթական նստաշրջանները գումարվում են փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին:

Նստաշրջանի ընթացքում յուրաքանչյուր ամիս հրավիրվում է ավագանու առնվազն մեկ նիստ, որոնց օրերը որոշում է ավագանին:

Նորընտիր ավագանու առաջին նիստը օրենքի ուժով գումարվում է

ավագանու անդամների ընտրվելու վերաբերյալ որոշման պաշտոնական հրապարակումից հետո՝ հաջորդ երկուշաբթի օրը:

Ավագանու նիստերը վարում է համայնքի ղեկավարը, իսկ մինչև համայնքի ղեկավար ընտրվելը նիստը վարում է նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են որոշում ընդունելու համար անհրաժեշտ թվով ավագանու անդամներ:

Ավագանու նիստը հրապարակային է: Ավագանու կանոնակարգով սահմանված դեպքերում ավագանու նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն կեսով ընդունված որոշմամբ կարող են անցկացվել դռնփակ քննարկումներ: Ավագանու նիստերի գումարման, նիստերում հարցերի քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով:

Համայնքի ղեկավար

Համայնքի ղեկավարը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային ծառայողների, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների և համայնքապատկան այլ հիմնարկների միջոցով:

Համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքային բյուջեի և համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրագործման համար: Նա է պատասխանատու հանրային նշանակության հարցերը կարգավորելու և պետական ու մասնավոր, ինչպես նաև միջազգային ու հասարակական կառույցների հետ համայնքի անունից հաղորդակցվելու համար:

Եթե համայնքի բնակչության թիվը գերազանցում է 3,000-ը, ապա այն պետք է ունենա պաշտոնական կայք, որի ստեղծումն ու վարումը պետք է ապահովի համայնքի ղեկավարը:

Վարչական ղեկավար

Վարչական ղեկավարի պաշտոնը համայնքային վարչական պաշտոն է: Եթե բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրված բնակավայրի բնակիչների թիվը գերազանցում է 500-ը, ապա այդտեղ անպայմանորեն նշանակվում է վարչական ղեկավար, բացառությամբ համայնքի կենտրոնի: Իսկ եթե բնակավայրի բնակիչների թիվը մինչև 500-ն է, ապա վարչական ղեկավար կարող է չնշանակվել ավագանու որոշմամբ:

Վարչական ղեկավարն իրականացնում է մշտադիտարկում համայնքային ծառայությունների իրականացման գործընթացում և խնդիրների ու առաջարկությունների դեպքում դրանք ներկայացնում է համայնքի ղեկավարին ու ավագանուն:

Ի՞նչ է մասնակցությունը: Մասնակցության ձևեր, մոտեցումներ, Հարթի մասնակցության աստիճանը որպես երիդասարդների մասնակցության մոտեցում:

Մասնակցությունը ժողովրդավարության կայացման նախապայմանն է:

Մասնակցությունը քաղաքացու կյանքի և իր համայնքի վերաբերյալ որոշումների վրա ներգործությունն է: Քաղաքացիների մասնակցությունը ենթադրում է ակտիվ և ներգրավված ազդեցություն, երբ քաղաքացին կարողանում է իր փաստարկներով և գիտելիքներով ներգրավվել և ներգործել տեղական մակարդակի որոշումների վրա: Կարևոր է

իմանալ, որ մասնակցությունն առավել արդյունավետ է, երբ այն հիմված է համագործակցության և փոխըմբռնման վրա: Սա նշանակում է, որ քաղաքացին, երբ ցանկանում է ազդել որոշումների կայացման վրա, պետք է համագործակցի բոլոր շահակիր կողմերի հետ՝ համայնքային իշխանություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, ակտիվիստներ և այլն:

Խոսելով մասնակցության մասին կարևոր է նշել, որ այն լինում է ակտիվ և պասիվ:

Պասիվ մասնակցություն է օրինակ կրթական և իրազեկման ծրագրերի իրականացումը ՏԻՄ-ի կողմից՝ քաղաքացիների ներգրավմամբ: Պասիվ մասնակցությունն այն է, երբ տեղեկատվությունը փոխանցվում է միայն ՏԻՄ-ից քաղաքացիներին և փոխադարձ տեղեկատվություն չի փոխանցվում: Օրինակ ընտրությունների մասնակցությունը պասիվ մասնակցության ձև է:

Իսկ արդեն ակտիվ մասնակցությունն իրենից ենթադրում է քաղաքացիների ներգրավում և ներգործում ու մասնակցություն ասելիս այս ձեռնարկում հիմնականում մենք հենց նկատի ունենք ակտիվ մասնակցության ձևը: Ակտիվ մասնակցությունը տեղեկատվության ու գիտելիքի փոխանակումն է: Ակտիվ մասնակցության



Հեղինակ՝ Տիգրան Մարգարյան

ձևեր են հանրային բաց լսումները, հարցումները, ֆոկուս խմբային քննարկումները և բոլոր այն ձևերը, որոնց միջոցով քաղաքացին հնարավորություն է ստանում ազդեցություն ունենալ որոշումների կայացման վրա:

Ռոջեր Հարթի մասնակցության աստիճանակարգը իրենից ներկայացնում է ութ նկարագրական աստիճաններ, որոնք իրենց հերթին ներկայացնում են, թե ինչ մակարդակներում կարող է դիտարկվել բնակչության՝ հատկապես երիտասարդության մասնակցայնությունը տեղական ինքնակառավարմանը:

Ռ. ՀԱՐԹԻ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳԸ

	Նկարագրություն	Օրինակ
8. Համագործակցություն	Նախաձեռնությունն ամբողջությամբ երիտասարդներինն է: Երիտասարդները համագործակցում են մեծահասակների հետ՝ օգտագործելով նրանց գիտելիքներն ու փորձառությունը հօգուտ նախաձեռնության:	Բուհի ուսանողները որոշում են ստեղծել ուսանողական գիտական ընկերություն, որը պետք է մշակի նորարարական հետաքրքիր գաղափարներ, որոնք կարող են կիրառվել բիզնեսում: Ընկերությունը կազմում է իր կառավարման խորհուրդը, որտեղ որոշվում է նաև ներգրավել համապատասխան ֆակուլտետների ճանաչված դասախոսների և մի քանի ինստիտուտի գիտնականների, որոնք կարող են նպաստել այդ ընկերության զարգացմանը:
7. Ինքնուրույնություն	Նախաձեռնությունն ամբողջությամբ երիտասարդներինն է: Երիտասարդներն իրենք են մշակում նախաձեռնությունը, հայթայթում միջոցները և իրականացնում այն:	Երիտասարդական խումբը որոշում է աղետից տուժած այն ընտանիքների համար, որոնք դեռ ապրում են տնակներում, լուծել բնակարանային խնդիրներ: Նրանք կազմում են ֆոնդահայթայթման «քրաուդֆանդինգային» ծրագիր, հավաքում են միջոցներ և իրականացնում են բնակարանների ապահովման ծրագիրը բացարձակ ինքնուրույն և ըստ իրենց իսկ որոշած ծրագրի:

6. Համատեղ որոշումների կայացում	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդներն ու մեծահասակները նախաձեռնության իրականացման ընթացքում հավասարազոր ձայնի իրավունք ունեն:	Համակառավարման մեխանիզմ. կառավորությունը ստեղծում է իրեն առընթեր Երիտասարդական քաղաքականության խորհուրդ, որտեղ 50/50 սկզբունքով ներգրավվում են երիտասարդական կազմակերպությունների անդամներ, փորձագետներ և համապատասխան նախարարությունների ներկայացուցիչներ, որոնք համատեղ որոշումներ են ընդունում երիտասարդական քաղաքականության զարգացման ուղղությունների վերաբերյալ:
5. Տեղեկացում և խորհրդակցում	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդները տեղեկացված են և իրենց կարծիքը հաշվի է առնվում: Այն կարող է ընդունվել կամ չընդունվել:	Քաղաքի բարեկարգման ծրագրերի մշակման ժամանակ քաղաքային իշխանություններն առցանց գործիքների միջոցով հնարավորություն են ստեղծում երիտասարդական խմբերին մասնակցել բյուջեի բաշխմանը՝ քվեարկելով այս կամ այն բարեկարգման ծրագրի համար: Նրանց կարծիքները հաշվի են առնվում վերջնական որոշման կայացման մեջ:
4. Տեղեկացում	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդները տեղեկացվում են նախաձեռնության նպատակի և բոլոր գործընթացների մասին, իսկ մասնակցում են որպես կատարողներ:	Կազմակերպություններն իրականացնում են ծրագրեր երիտասարդների համար, երիտասարդ անդամները մասնակցում են կազմակերպության թիրախ խմբերի համար տրամադրվող բազմաթիվ ծառայությունների մատուցմանը, սակայն որևէ կերպ չեն մասնակցում կազմակերպության կառավարմանը, ծրագրերի մշակմանը և նյութական ռեսուրսների բաշխմանը:

3. Իմիտացիա	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդներին հրավիրում են «մասնակցելու» մեծահասակների աշխատանքին: Այդ խմբերը կայացնում են մեծահասակների կողմից թելադրված կամ ոչ մեկին չհետաքրքրող, որևէ ազդեցություն չգործող որոշումներ:	Քաղաքական կամ հասարակական ոլորտում ռազմավարական ծրագրերի մշակման ընթացքում երիտասարդների որոշ խմբերի շրջանում անց են կացվում հանրային լսումներ, սակայն դրանց կողմից առաջարկված գաղափարների ներառման իրական հնարավորություններ և մեխանիզմներ չկան:
2. Դեկորացիա	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդներին օգտագործում են որպես զարդարանք՝ մեծահասակների գործունեությանը հավելյալ կշիռ և դրական տպավորություն հաղորդելու համար:	Նախագահական կամ այլ ընտրությունների ժամանակ հեռուստատեսությամբ հաճախ ցույց են տալիս թեկնածուների այցերը դպրոցներ և մանկապարտեզներ: Պաստառների և թռուցիկների վրա տեղադրվում է թեկնածուի լուսանկարը երեխաներին գրկած կամ երիտասարդների հետ քննարկումներ վարելիս:
1. Մանիպուլացիա	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդները պարզապես ներկա են գտնվում և հետևում հրահանգների: Երիտասարդները չգիտեն՝ ինչու են մասնակցում այդ միջոցառումներին ու գալիս են՝ այլ դրդապատճառներից ելնելով:	Միջոցառման կազմակերպիչները բաժանում են երիտասարդներին տարբեր պատկերներով և տեքստերով շապիկներ և տանում որևէ թեմայով հավաքի կամ ֆլեշմոբի մասնակցելու: Որպես կանոն նրանց չի բացատրվում տվյալ միջոցառման էությունը, նպատակը, իրենց դերն ու մասնակցության իմաստը:

ՀԿՏՀ-ները, որպես քաղաքացիների մասնակցության գործիք

Ինչպես գիտենք, ՀՀ-ում յուրաքանչյուր համայնք, որի բնակչության թիվը գերազանցում է 3,000-ը, ապա այն պետք է ունենա պաշտոնական կայքէջ (համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ (ՀԿՏՀ)): Եկեք դիտարկեք Եղեգնաձոր համայնքը: Եղեգնաձոր բազմաբնակավայր համայնքի պաշտոնական կայքէջը՝ ՀԿՏՀ-ն է www.yeghegnadzor.am/-ը:

ՀԿՏՀ-ները հանդիսանում են լավագույն գործիք քաղաքացիների մասնակցայնության բարձրացման և իրազեկման համար:

Նշված բաժիններում քաղաքացիները կարող են ծանոթանալ՝ համայնքապետարանի, համայնքային աշխատողների գործունեությանը: Կայքը, որպես գործիք, հնարավորություն է տալիս տեսնել, թե ինչպես է օգտագործվում համայնքային բյուջեն, ինչ գույք է գտնվում համայնքի հաշվեկշռում, ինչպես նաև ծանոթանալ տարբեր տեղեկատուներին և համայնքում գործող ենթակառուցվածքներին:

Կայքը նաև հնարավորություն է ընձեռում ուղարկել առցանց դիմումներ, հարցումներ և բողոքներ՝ հեշտացնելով համայնքապետարան դիմելու գործընթացը: Համայնքի ղեկավարի և ավագանիների տվյալները (էլ. փոստ, հեռախոսահամար, հասցե և այլ տվյալներ)



Հեղինակ՝ Սոնա Մանուկյան

նույնպես հասանելի են կայքէջում, ինչը հնարավորություն է տալիս անմիջական կապ հաստատել նրանց հետ:

Կայքի հաջորդ լավ գործիքը, դա խնդիրներ գրանցելու հարթակն է, որի միջոցով կարող է քաղաքացին գրանցել իր համայնքում ու բնակավայրում առկա խնդիրները՝ կցելով լուսանկար և կոնկրետ խնդրի տեղանքը:



նկ.1 Եղեգնաձորի կայքէջի կառուցվածքը

Գլուխ 2

Կարծրատիպեր, սակավ հնարավորությամբ խմբեր, հաշմանդամություն ունեցող անձինք

Ինչ է կարծրատիպը

Մարդկանց տարբերակումը որևէ խմբի պատկանելության տեսանկյունից հայտնի է որպես սոցիալական դասակարգում՝ բնական ճանաչողական գործընթաց, որի միջոցով մենք մարդկանց ընդգրկում ենք սոցիալական խմբերում: Սոցիալական դասակարգումը տեղի է ունենում երբ մենք դիտարկում ենք ինչ-որ մեկին, որպես տղամարդ (կնոջ համեմատ), տարեց մարդ (երիտասարդի համեմատ), սևամորթ (սպիտակամորթի համեմատ) եւ այլն(Օլպորտ, 1954/1979): Ճիշտ այնպես, ինչպես մենք դասակարգում ենք առարկաները տարբեր տեսակի, նույն կերպ դասակարգում ենք մարդկանց ըստ սոցիալական խմբերի իրենց պատկանելության: Այս կերպ, մենք սկսում ենք մարդուն դիտարկել, ավելի շատ որպես սոցիալական խմբի անդամ, քան որպես անհատ:

Երբ մենք սկսում ենք խմբերի բոլոր անդամներին վերագրել ընդհանուր հատկանիշներ, որոնք իրականում չկան, մենք ստեղծում ենք կարծրատիպեր խմբերի անդամների նկատմամբ, առանց հաշվի առնելու, արդյոք այս բնութագրերը համապատասխանում են առանձին անհատների, թե ոչ: Եթե տղամարդիկ կարծում են, որ բոլոր կանայք նույնն են, ապա նրանք կարող են նաեւ մտածել, որ կանայք ունեն նույն դրական եւ բացասական հատկանիշները (օր. հոգատար, զգացմունքային): Նույն կերպ կանայք կարող են ունենալ պարզեցված պատկերացումները տղամարդկանց մասին (Օրինակ, նրանք ուժեղ են, չեն ցանկանում պարտավորություններ ստանձնել): Այսպիսով նմանատիպ կարծրատիպերը արմատավորվում են խմբի մտավոր պատկերացումներում :

Կարծրատիպերը արմատավորվում և պահպանվում են, քանի որ դրանք հաստատող տեղեկատվությունն ավելի լավ է հիշվում, քան դրանք հերքող տեղեկատվությունը: Երբ մենք տեսնում ենք սոցիալական խմբի անդամի որոշակի վարքագիծ, մենք հակված ենք ավելի լավ հիշել այն տեղեկատվությունը, որը հաստատում է մեր կարծրատիպը, քան այն տեղեկատվությունը, որը հերքում է մեր կարծրատիպը: Եթե մենք կարծում ենք, որ կանայք վատ վարորդներ են և տեսնում ենք կին վատ վարորդի, ապա հակված ենք հիշել այս մասին, բայց երբ տեսնում ենք մի կնոջ, ով հոյակապ վարորդ է, պարզապես մոռանում ենք: Մենք հակված ենք աշխարհին ընկալել այնքանով, որքանով այն համապատասխանում է մեր համոզմունքներին:

Մեր կարծրատիպերը ձևավորվում են տարբեր գործընթացների ընթացքում, ինչի պատճառով դրանք ավելի դժվար է կոտրել: Դրանք դառնում են մեր առօրյա կյանքի անբաժանելի և կարևոր մասը: Կարծրատիպերը հաճախ արտահայտվում են հեռուստատեսությամբ, ֆիլմերում և սոցիալական ցանցերում, իսկ մեր համոզմունքների մեծ մասը մենք վերցնում ենք հենց այս աղբյուրներից: Մեր ընկերները նույնպես հակված են հավատարիմ մնալ իրենց համոզմունքներին ճիշտ մեզ նման, և հատկանշական է, որ մենք կիսում ենք այդ համոզմունքները, երբ միասին ենք (Շեյլեր և Քոնվեյ, 1999): Կարճ ասած, կարծրատիպերը

Հեղինակ՝ Նունե Հակոբյան

ուժեղ դրսևորում ունեն այն պատճառով, որ կարևոր սոցիալական նորմեր են հանդիսանում և մեր մշակույթի մի մասն են (Գիմոնդ, 2000):

Երբ կարծրատիպերը հաստատվեցին, հակվեցին արմատանալու: Յակով Տրոփը և Էրիկ Թոմփսոնը (1997) պարզել են, որ մարդիկ ավելի քիչ հարցեր են տալիս բոլոր այն անձանց, որոնց մասին արդեն իսկ ունեն ձևավորված կարծրատիպեր (ասես գիտեն, թե ովքեր են այդ մարդիկ), իսկ եթե այնուամենայնիվ տալիս են հարցեր, ամենայն հավանականությամբ հաստատվել են այն կարծրատիպերը, որոնք նրանք ունեցել են: Քանզի մեր կարծրատիպերը մեզ համար շատ «ճիշտ» են, հեշտությամբ ազդում են մեր դատողությունների և արձագանքների վրա: Սոցիալական հոգեբան Ջոն Բարգը մի անգամ մեկնաբանեց կարծրատիպերը դրանք համարելով «ճանաչողական հրեշներ», քանի որ դրանց դրսևորումը շատ ուժեղ է, և նույն կերպ ուժեղ ազդեցություն են ունենում հանրային դատողության վրա (Բարգ, 1999):

Կարծրատիպերի ձևավորումը տարբեր սոցիալական խմբերի կամ մարդկանց նկատմամբ խնդրահարույց է հատկապես երբ դրանք բացարձակ չեն համապատասխանում իրականությանը (Սթենջեր, 1995): Ուրիշների մասին կարծրատիպեր ստեղծելը պարզապես անարդար է: Նույնիսկ եթե շատ կանայք ավելի զգացմունքային են, քան տղամարդկանց մեծ մասը, դա դեռ չի նշանակում, որ բոլորն այդպիսին են, հետևաբար շատ սխալ է ընդհանրացնել և ողջ սեռին վերագրել այդ հատկանիշը:

Իհարկե, դուք կարող եք մտածել, որ երբեք չեք կարծրատիպացնում: Բայց ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կարծրատիպերը հաճախ օգտագործվում են մեր գիտակցությունից անկախ, ինչը շատ դժվարացնում է դրանց ուղղումը: Նույնիսկ այն ժամանակ, երբ մենք կարծում ենք, որ լիովին արդար ենք, այնուամենայնիվ կարող ենք կարծրատիպացնել անգիտակցաբար (Չեն և Բարգ, 1999): Հաճախ էլ, երբ գտնվում ենք ոչ հարմարավետ միջավայրում, դրսևորում ենք անհանգստություն: Նման դեպքերում անհրաժեշտ է լինում օգտագործել ավելի շատ ճանաչողական ռեսուրսներ՝ վերահսկելու մեր վարքագիծը,

քանի որ մեր անհանգստությունը բացահայտում է մեր կարծրատիպերը (Բաթս և Պլանտ, 2006/ Ռիչերսոն և Շելթոն, 2003):

Կարծրատիպային սպառնալիք

Մեր կարծրատիպերը ազդում են ոչ միայն ուրիշների մասին մեր դատողությունների վրա, այլ նաև մեր մասին համոզմունքների վրա և նույնիսկ կարևոր առաջադրանքների կատարման վրա: Որոշ դեպքերում այս համոզմունքները կարող են դրականորեն անդրադառնալ մեզ վրա, և մեզ ստիպել ավելի վստահ զգալ և այդպիսով ավելի լավ կատարել առաջադրանքները: Օրինակ՝ քանի որ ասիացի ուսանողները տեղյակ են այն կարծրատիպի մասին, որ «Ասիացիները լավ են մաթեմատիկայից», հիշելով այս կարծրատիպի մասին նախքան մաթեմատիկայի դժվար թեստ հանձնելը, կարող են հրաշալի հանձնել թեստը (Վոլթն և Կոեն, 2003): Մյուս կողմից, երբեմն այդ համոզմունքները բացասական են, և ստեղծում են բացասական համոզմունքներ, որոնց պատճառով արդյունքում մենք ավելի վատ ենք հանդես գալիս միայն կարծրատիպերի մասին մեր իմացության և դրանցով առաջնորդվելու պատճառով:



Կարծրատիպերի տարածումը արագ և հաջորդական գործընթաց է՝ նման հոսանքի շղթային
Հեղինակ՝ Կարեն Մաթևոսյան

Մեկ այլ օրինակ՝ քանի որ սևամորթ ուսանողները տեղյակ են այն կարծրատիպի մասին, որ «սևամորթները ինտելեկտուալ առումով զիջում են սպիտակամորթներին», սա ազդում է նրանց ինքնիրացման վրա բացասականորեն և կարող է խանգարել նրանց ինտելեկտուալ թեստերի ժամանակ՝ առաջացնելով վախ, որ ձախողելու դեպքում կհաստատեն այդ կարծրատիպը: Ի պաշտպանություն այս վարկածի՝ Սթիլի և Արոնսոնի հետազոտությունները ցույց տվեցին, որ երբ սևամորթ ուսանողներին խնդրեցին նշել իրենց ռասան մաթեմատիկայի թեստ հանձնելուց առաջ (կրկին ակտիվացնելով կարծրատիպը), նրանք ավելի վատ հանդես եկան, քան նախորդ քննությունների ժամանակ, մինչդեռ սպիտակամորթ ուսանողների միավորները չտուժեցին նախօրոք ռասան նշելու հետևանքով, բայց նույն կերպ սպիտակամորթ տղամարդիկ ավելի վատ են հանդես եկել մաթեմատիկայի թեստում, երբ նրանց ասել են, որ իրենց արդյունքները համեմատվելու է ասիացի տղամարդկանց հետ (Արոնսոն, Լուսթինա, Գուդ, Կիոհ և Սթիլ, 1999): Այսպիսով Սթիլը և Արոնսոնը պնդում էին, որ բացասական կարծրատիպերի մասին մտածելը առաջացնում է կարծրատիպային սպառնալիք՝ նպաստելով մեր կատարողականի նվազմանը: Քանի որ սպառնալիքը (այս դեպքում որևէ կարծրատիպ) «օդում է», կարող է անձի վրա բացասաբար ազդել (հիշենք սևամորթների օրինակը):

Եվս մեկ հետազոտությունից պարզ է դարձել, որ կարծրատիպային սպառնալիքը պայմանավորված է ինչպես ճանաչողական, այնպես էլ աֆեկտիվ գործոններով: Եթե իմացական մակարդակում մենք դրսևորում ենք շրջակա միջավայրի նկատմամբ զգոնություն և կարծրատիպային մտքերը ճնշելու փորձեր, ապա աֆեկտիվ կողմից կարծրատիպային սպառնալիքը ստեղծում է սթրես, ինչպես նաև մի շարք աֆեկտիվ արձագանքներ, ներառյալ անհանգստությունը (Շմեդոր, Ջոնս և Ֆորբս, 2008):

Կարծրատիպային սպառնալիքները բացարձակ չեն և մենք կարող ենք հաղթահարել դրանք, եթե փորձենք: Կարևոր է նվազեցնել վատ ինքնազգացողությունը, որն առաջանում է, երբ մեզ կարծրատիպացնում են, ինչպես նաև պետք է փորձել կառավարել կարծրատիպերի

թողած ազդեցությունը մեզ վրա: Իրականում, միայն իմանալը, որ կարծրատիպային սպառնալիքը գոյություն ունի և կարող է ազդել աշխատանքի վրա, կարող է օգնել մեղմել դրա բացասական ազդեցությունը (Ջոնս, Շմեդոր և Մարթոնս, 2005):

Կարծրատիպերի տեսակները

Կարծրատիպերի 9 հիմնական տեսակներն են՝

1. **Գենդերային**

   Գենդերային կարծարտիպերը սեռով պայմանավորված հասարակության գիտակցության մեջ ամրագրված պատկերացումներն են երկու սեռերի վարքագծային հատկանիշների մասին: Գենդերային կարծրատիպերի հետևանքով աճում է սեռով պայմանավորված խտրականությունը և իրավունքների սահմանափակումը:

   Օրինակ՝ Կինը չի կարող զբաղվել քաղաքականությամբ:

   Հետևանք՝ Կանայք չեն առաջադրվում ընտրություններում, քանի որ սոցիալական միջավայրը հանդիսանում է արգելք: Կանայք չեն լինում ներգրավված պետական և տեղական կառույցներում:

2. **Սոցիալական**

   Սոցիալական հատկանիշներով պայմանավորված որևէ սոցիալական խմբի մասին ընդհանրացված կարծիքը, որը առաջացնում է նախապատվություն կամ արգելք խմբի անդամների լիարժեք ներգրավման համար:

   Օրինակ՝ Վաճառականները միշտ խաբեբաներ են:

   Հետևանք՝ Այլ սոցիալական խմբեր սկսում են առաջնորդվել վաճառականների մասին կարծրատիպով և բացառում շփումը նրանց հետ:

3. **Ազգային**

Որոշակի ազգերի կամ ազգի ներկայացուցիչների հանդեպ կարծրացած պատկերացումներ, որի հետևանքով ըստ ազգային պատկանելիության ստեղծվում է նախապատվություն կամ անբարենպաստ վերաբերմունք, թշնամանք:

Օրինակ՝ Բոլոր արաբները ահաբեկիչներ են:

Հետևանք՝ Քրիստոնյա մարդկանց կողմից առաջանում է թշնամանք, վախ և ատելություն, և դրսևորվում է անբարենպաստ վերաբերմունք:

4. **Ռասայական**

Մաշկի գույնով և ռասայով պայմանավորված անբարենպաստ վերաբերմունք:

Օրինակ՝ Սևամորթները միայն կարող են ֆիզիկական աշխատանք կատարել:

Հետևանք՝ Դեռ տասնյակ երկրներում խախտվում են սևամորթների իրավունքները, դրսևորվում է տարբերակված և խտրական վերաբերմունք:

5. **Հաշմանդամության**

Անձի հաշմանդամությամբ պայմանավորված, անձի և հաշմանդամության մասին ընդհանրացված կարծիքներ, որոնք խոչընդոտում են հասարակական կյանքում լիարժեք ներգրավելուն:

Սիրիահայ փախստական
Հեղինակ՝ Տիգրան Մարգարյան

Օրինակ՝ Մտավոր խնդիրներ ունեցող անձը երբեք ոչ մի աշխատանք չի կարող իրականացնել:

Հետևանք՝ Կարծրատիպի հետևանքով ընդհանրացվում են բոլոր մտավոր խնդիրները և նույնականացվում անկարողության հետ, որի պատճառով հաճախ տարբեր մտավոր խնդիրներ ունեցող մարդիկ դուրս են մնում հասարակությունից:

6. **Կրոնական**

Կրոնական հայացքներով պայմանավորված անձի կամ խմբի նկատմամաբ տարբերակված և կարծրացած դիրքորոշումներ և վերաբերմունք:

Օրինակ՝ Մուսուլմանները ագրեսիվ են:

Հետևանք՝ Արդեն իսկ ձևավորված կարծրատիպի հիման վրա ձևավորվում է անբարենպաստ վերաբերմունք մուսուլմանների նկատմամբ, որը կարող է տարածվել այլ կրոնական հայացքների դեպքում՝ ևս առաջացնելով խտրական վերաբերմունք:

7. **Մշակութային**

Անձը տարբերակված և կարծրացած կարծիքի զոհ է դառնում ըստ իր ավանդույթների, ծեսերի, տոների կամ սեփական հետաքրքրությունների:

Օրինակ՝ Բոլոր արվեստագետները ունեն հոգեկան կամ հոգեբանական խնդիրներ:

Հետևանք՝ Հասարակությունը խտրական վերաբերմունք է դրսևորում արվեստագետների նկատմամբ:

8. **Տարիքային**

Տարիքով պայմանավորված հասարակական գիտակցության մեջ դրված նորմեր:

Օրինակ՝ 40 տարեկան կինը այլևս չի կարող աշխատել:

Հետևանք՝ Տարիքով պայմանավորված անձինք աշխատանքի չեն ընդունվում և տեղի է ունենում իրավունքների խախտում:

9. **Քաղաքական**

Քաղաքական հայացքներով պայմանավորված ընդհանրացված դիրքորոշումներ հասարակության ներսում:

Օրինակ՝ X կուսակցության ներկայացուցիչներից բոլորը զբաղվում են կոռուպցիայով:

Հետևանք՝ Տվյալ կուսակցության ներկայացուցիչները

խտրականացվում և պիտակավորվում են:

Ավելի հաճախ կարծրատիպերը ցուցաբերվում են այն երիտասարդների նկատմամբ, որոնք ունեն որոշակի առանձնահատկություններ կամ սակավ հնարավորություններ:

Այժմ միասին հասկանանք, թե ինչ է **սակավ հնարավորությունը**:

Ի՞նչ է սակավ հնարավորությունը

Սակավ հնարավորություն ունեցող են կոչվում այն երիտասարդները, ովքեր իրենց հասակակիցների համեմատ ունեն քիչ հնարավորություններ և հանդիպում են մի շարք խոչընդոտների:
Այդ իրավիճակները հաճախ խանգարում են տարբեր միջոցառումներին մասնակցելուն, լիարժեք կրթություն ստանալուն, աշխատանքի ընդունվելուն, համայնքային կյանքին մասնակցելուն:
Սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդները խոցելի խումբ են հանդիսանում մեր հասարակության մեջ, սակայն կան միջոցներ, որոնց շնորհիվ կարող ենք ապահովել նրանց ներգրավվածությունը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Սակավ հնարավորությամբ խմբերը ըստ Էրազմուս «Ներառում և բազմազանություն» ռազմավարության

Այսօր բազմաթիվ երիտասարդներ երկար ժամանակ գործազուրկ են, բախվում են խտրականության, հայտնվում են սոցիալ-տնտեսական մարգինալացման վտանգի տակ: Եվրամիությունը ակտիվ միջոցներ է ձեռնարկում դրան հակազդելու համար՝ օգնելով հասարակության ամենախոցելի մարդկանց՝ այն երիտասարդներին, ովքեր ավելի սակավ հնարավորություններ ունեն համեմատած իրենց հասակակիցների հետ: Սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդներին թիրախավորելը վաղուց եղել է ծրագրի հիմնասյունը: 2007-2013 թվականներին ԵՄ-ի «Երիտասարդությունը գործողության մեջ» ծրագիրը հաջող արդյունքների է հասել սոցիալական ներառման առումով:

Սակավ հնարավորությամբ խմբեր

Հաշմանդամություն	Սոցիալական	Տնտեսական
Մշակութային	Կրթական	Աշխարհագրական
	Առողջական	

1. **ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ**- Երիտասարդներ, ովքեր ունեն հաշմանդամություն և առանձնահատուկ պայմանների կարիք (մտավոր, ինտելեկտուալ, կոգնիտիվ, ֆիզիկական և այլ առանձնահատկություններ):
2. **ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ**- Երիտասարդներ, ովքեր ունեն խրոնիկ հիվանդություններ, որոշակի բարդ հիվանդություններ և հոգեկան ծանր վիճակներ:

3. **ԿՐԹԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**- Երիտասարդներ, ովքեր ունեն սովորելու դժվարություններ, ովքեր վաղ են լքել դպրոցը, չորակավորված երիտասարդ մասնագետներ, դպրոցում ունեցել են կամ ունեն ցածր առաջադիմություն:

4. **ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**- ներգաղթյալներ, փախստականներ կամ ներգաղթյալների ժառանգներ կամ փախստականների ընտանիքներ, ազգային կամ էթնիկ փոքրամասնության պատկանող երիտասարդներ, լեզվական հարմարվողականության և մշակութային ներառման դժվարություններ ունեցող երիտասարդներ և այլն:

5. **ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ**- Տնտեսական խոչընդոտներ. ցածր կենսամակարդակ ունեցող երիտասարդներ, ցածր եկամուտ, կախվածություն սոցիալական ապահովության համակարգից, երկարաժամկետ գործազրկության մեջ գտնվող երիտասարդներ կամ աղքատ երիտասարդներ, անօթևան երիտասարդներ կամ ֆինանսական խնդիրներ ունեցող երիտասարդներ և այլն:

6. **ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ**-երիտասարդները խտրականության են ենթարկվում սեռի, տարիքի, էթնիկ պատկանելիության, կրոնի, սեռական կողմնորոշման, հաշմանդամության և այլն, երիտասարդներ, ովքեր ունեն սոցիալական հմտություններ, հակասոցիալական կամ բարձր ռիսկային վարքագիծ՝ (նախկին) հանցագործներ, (նախկին) թմրամիջոցներ կամ ալկոհոլ չարաշահողներ, երիտասարդ և/կամ միայնակ ծնողներ, ծնողազուրկ երիտաարդներ և այլն:

7. **ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ**- հեռավոր կամ գյուղական բնակավայրերի երիտասարդներ, երիտասարդներ, ովքեր ապրում են փոքր կղզիներում կամ սահմանամերձ շրջաններում, քաղաքային սահմանափակ ենթակառուցվածքներում ապրող երիտասարդներ (սահմանափակ հասարակական տրանսպորտ, աղքատ հարմարություններ) և այլն:

Սակավ հնարվորությունները՝ ըստ 2021-2025թ.-ների երիտասարդական պետական քաղաքականության նախագծի

Երիտասարդության պետական քաղաքականության արդյունավետության տեսանկյունից առանցքային է ներառականության սկզբունքը, որը ենթադրում է ինչպես հատուկ կարիքներ ունեցող և լայն առումով սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդների հասանելիության ապահովումն իրականացնող ծրագրեր, այնպես էլ թիրախային ծրագրերի իրականացում հենց այդ խմբերի երիտասարդների համար և նրանց կողմից:
Երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում երիտասարդների խմբերը, որոնք դիտարկվում են որպես սակավ հնարավորություններ ունեցող երիտասարդներ, ներառում են՝

- **Հաշմանդամություն ունեցող երիտասարդներ,**

  Այս խմբի երիտասարդների մասին խոսելիս պետք է հաշվի առնել հաշմանդամության բոլոր՝ տեսանելի և անտեսանելի՝ ֆիզիկական, տեղաշարժման, մտավոր և հոգեսոցիալական տեսակները: Այս խմբում ներառվում են տեսողության, լսողության , հենաշարժողական, մտավոր խնդիրներ և դաունի, համախտանիշ կամ աուտիզմ ունեցող երիտասարդները:

  Օրինակ՝ Եթե մշակվել է մշակութային միջոցառում, ապա Արսենի համար, ով ունի տեսողության խնդիր, միջոցառումը պետք է լինի մատչելի, պետք է տրամադրվեն աուդիոնյութեր, բրայլյան տեղեկագրեր և այլն:

- **Փախստական, տեղահանված, ապաստան հայցող կամ նմանատիպ կարգավիճակում գտնվող երիտասարդներ,**

  Այս խմբի մասին խոսելիս պետք է շեշտադրել այլ երկրից կամ տարածաշրջանից փախստական դարձած երիտասարդներին, այն երիտասարդներին, որոնք ապաստան են փնտրում, կորցրել են իրենց

տունը կամ նմանատիպ իրավիճակում են հայտնվել:

Օրինակ 1. Արմենը փախստական է Սիրիայից և ապաստան է գտել Հայաստանի հանրապետությունում:

Օրինակ 2. Աննան երկրաշարժի պատճառով կորցրել է իր տունը և ունի ապաստանի կարիք:

- **Զինվորական ծառայությունից նախորդ 1 տարում զորացրված և ազատամարտիկ երիտասարդներ,**

Հայաստանի Հանրապետությունում գործում է 2 ամյա ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն: Երիտասարդները, ովքեր 2 տարի բացակայել են իրենց առօրյա կյանքից, ունեն ներառման և հարմարման կարիք և համարվում են սակավ հնարավորություններով երիտասարդներ, քանի որ դեռևս չունեն կրթություն, զբաղվածություն և այլն: Ազատամարտիկ երիտասարդները նրանք են, ովքեր ինքնակամ մեկնել են պատերազմական գործողությունների: Այս խմբի դեպքում ևս անհրաժեշտ են հարմարեցումներ: Օրինակ՝ եթե ազատամարտիկը վիրավոր է՝ առանձնահատուկ պայմաններ:

Օրինակ՝ Արմենը, ով վերադարձել է ծառայությունից 2022 թվականի ձմռանը, այժմ խնդիր ունի վերականգնելու իր կրթությունը 2-րդ կուրսից և գտնելու աշխատանք:

- **Ազգային փոքրամասնություն ներկայացնող երիտասարդներ,**

Չնայած Հայաստանի Հանրապետությունում գերակշռում են հայերը, սակայն հանրապետությունում ապրում են նաև ասորիներ, ռուսներ, եզդիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ: Նրանք փոքրամասնություն են կազմում ելնելով իրենց քիչ քանակով ներկայացվածությունից: Այս երիտասարդները ունեն սակավ հնարավորություններ, քանի որ հաճախ խախտվում են նրանց իրավունքները կամ նրանք խնդիր ունեն այլ մշակույթում ապրելու:

Օրինակ՝ Վարոսը, լինելով եզդի և համարվելով ազգային փոքրամասնության ներկայացուցիչ, որոշ կարծրատիպերի

պատճառով չի կարողանում դառնալ ավագանի կամ ներգրավված լինել համայնքային զարգացման գործում:

- **Պատերազմի մասնակիցներ և պատերազմից անմիջականորեն ներազդված երիտասարդներ**,

  Պատերազմի մասնակիցները հետպատերազմյան շրջանում կարող են ունենալ հոգեբանական և հուզական տարատեսակ խնդիրներ: Այս երիտասարդների համար կարևոր է հարմարումը և ներառումը, քանի որ նրանց կյանքում տեղի է ունեցել արտակարգ իրավիճակ: Այս խմբի երիտասարդների թիվը զգալիորեն աճել է Արցախյան վերջին պատերազմից հետո և կարևոր է առանձնակի ուշադրություն դարձնել այս խմբի կարիքներին:

  Օրինակ՝ Աշոտը, ով պատերազմի մասնակից է եղել, այժմ այցելում է հոգեբանի մոտ և ստանում աջակցություն հուզական կարգավորման համար:

- **Գյուղական կամ սահմանամերձ/սահմանապահ համայնքներում ու բնակավայրերում բնակվող երիտասասրդներ,**

  Այս խմբին անդրադարձը ևս նշանակալի է: Հայաստանի Հանրապետությունում շուրջ 9 մարզ սահմանամերձ կամ սահմանապահ է, որը դժվարեցնում է բնակիչների առօրյան: Այս տարածաշրջանում ապրող երիտասարդները ապրում են վախի մթնոլորտում, քանի որ հնարավոր է սահմանային հարձակումներ սկսվեն: Գտնվելով բավականին հեռու քաղաքներից՝ նրանք զուրկ են ակտիվ հասարակական կյանք վարելու հնարավորությունից:

  Օրինակ՝ Շուշանը, ով ապրում է Սյունիքի մարզում, չի կարողանում հաճախել ոչ ֆորմալ կրթական դասընթացների, քանի որ սահամանմերձ գյուղում առկա չեն հնարավորություններ, իսկ այլ քաղաք գնալը և գալը կարող է պարունակել վտանգ հաշվի առնելով ճանապարհների սահմանամերձ լինելը:

- **Աղքատ կամ ծայրահեղ աղքատ երիտասարդներ.**

  Հայաստանի Հանրապետության բնակչության շուրջ 26%-ը աղքատ է (ԱՎԾ): Աղքատ և ծայրահեղ աղքատ երիտասարդները ունեն սակավ հնարավորություններ, քանի որ ցածր եկամուտը կամ եկամտի բացակայությունը բերում է մի շարք խնդիրների, ինչպիսիք են՝ զբաղվածության բացակայությունը, կրթությունից դուրս մնալը, անձնական պահանջմուքների հոգալու դժվարությունները:

  Օրինակ՝ Սոնան ապրում է ծայրահեղ ծանր պայմաններում և չի կարողանում հոգալ իր կենսական պահանջմուքների ծախսերը, հետ է մնում ակտիվ երիտասարդական կյանքից, ինչպես նաև սովորելու և կրթվելու հնարավորությունից, քանի որ ողջ շաբաթ աշխատում է:

- **Ներգաղթյալ և հայրենդարձված երիտասարդներ,**

  Այս խմբի երիտասարդների հիմնական խնդիրը մշակութային փոփոխությունն ու հարմարումն է, լեզվի տիրապետումը և հնարավորությունների փնտրումը նոր միջավայրում:

  Օրինակ՝ Գոհարը, ով 15 տարի ապրել է Ֆրանսիայում, որոշել է տեղափոխվել հայրենիք: Այժմ Գոհարը պետք է սովորի հայերեն, գտնի բնակարան և աշխատանք Հայաստանում ապրելու համար:

Պատերազմի մասնակից
Հեղինակ՝ Տիգրան Մարգարյան

Ազգային փոքրամասնություն
Հեղինակ՝ Աննա Խաչատրյան

- **Սոցիալական պաշտպանության ծառայություններ մատուցող կազմակերպությունների շահառու երիտասարդներ,**

  Սոցիալական պաշտպանության ծառայությունները այնպիսի ծառայություններ են, որոնք օգնում են կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երիտասարդներին հավասարապես ներառվել հասարակական կյանքին, ինչպիսիք են՝ գործազուրկների համար նախատեսված զբաղվածության ծրագրերը, սոցիալական նպաստը, շուրջօրյա խնամքի կենտրոնները:

  Օրինակ՝ 18 ամյա Մարինեն մանկատունը լքելուց հետո հայտնվել է ծանր կարգավիճակում և ունի բազում խնդիրներ, ինչպիսիք են՝ բնակարանի որոնում, կրթություն ստանալը կամ աշխատանք գտնելը:

- **Քրեական պատիժ կրող, պատժից ազատված, նախորդ մեկ տարում ազատված և վերահսկողության տակ գտնվող երիտասարդներ,**

  Այս խմբի երիտասարդները նույնպես բախվում են ներառման և հարմարման խնդրին, քանի որ հետևելով շատ կարծրատիպերի սոցիալական միջավայրը մի շարք խոչընդոտներ է դնում այս խմբի երիտասարդների առաջ:

  Օրինակ՝ Արթուրը, ով ծեծկռտուքի մեջ ընկնելով, գտնվում է վերահսկողության տակ, ցանկանում է աշխատանքի անցնել իրենց համայնքի փոքրիկ խանութում, սակայն նրան չեն ընդունում:

- **Աշխարհագրական և ենթակառուցվածքային դժվարություններ ունեցող բնակավայրերի երիտասարդներ,**

  Այս խմբի ներքո պետք է հասկանալ այլ բնակավայրերից կտրված բնակավայրերը, տարածաշրջանային առումով դժվարություն առաջացնող ենթակառուցվածքներով բնակավայրերը և համայնքները: Այս խմբի երիտասարդները դժվարությամբ են կարողանում ակտիվ սոցիալական կյանք վարել:

  Օրինակ՝ Արշակը ապրում է բլրի վրա գտնվող Վերին Սասնաշեն

գյուղում, որը բավականին հեռու է տարածաշրջանի մյուս գյուղերից: Արշակը ցանկանում է աշխատել մարզի Մշակույթի տանը, սակայն մարզկենտրոն տեղափոխող տրանսպորտ գյուղում չկա:

- **Բնապահպանական, տեխնոլոգիական և այլ աղետների ազդակիր համայնքների երիտասարդներ,**

  Այս խումբը վերաբերում է համայնքներին, որտեղ տեղի են ունեցել և ունենում սողանքներ, երկրաշարժեր, հրդեհներ կամ այլ աղետներ, ինչպես նաև աշխատում են բնապահպանական վնաս հասցնող կառույցներ ու գործարաններ:

  Օրինակ՝ Լիլիթը ապրում է համայնքում, որտեղ կա գործարան, որը արտանետում է վտանգավոր թափոններ, որոնք վնասում են համայնքը, այս ամենը բերում է հիվանդությունների և խնդիրների առաջացման:

- **Չսովորող և չաշխատող երիտասարդներ (NEET)՝ ներառյալ գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդներ,**

  Այս խումբն առանձնացվել է միջազգային NEET տերմինի հիման վրա, որը հապավում է և բացվում է որպես **Not in Education, Employment or Training- երիտասարդ, ով չունի կրթություն, աշխատանք և չի հաճախում դասընթացների**: Խումբը ներառում է տնտեսապես ոչ ակտիվ երիտասարդներին, քանի որ դա ևս առաջացնում է սակավ հնարավորություններ և ստեղծում առանձնահատուկ պայմանների կարիք:

  Օրինակ՝ Մարիամը ավարտել է դպրոցը, արդեն 20 տարեկան է և ոչնչով չի զբաղվում: Մարիամը չունի աշխատանք, չի սովորում այս պահին և հետաքրքրված չէ ոչ ֆորմալ դասընթացներով:

- **Սոցիալական բացառման ենթարկված այլ երիտասարդներ,**
  Այս ցուցակը սպառիչ չէ: Սակավ հնարավորություն ունեցող երիտասարդների խմբերի համապարփակ ցանկը, յուրաքանչյուր խմբի և նրանց հետ աշխատելու առանձնահատկությունները հավելյալ հետազոտության ու համաձայնեցման կարիք ունեն:

Հաշվի առնելով վերը նշված խմբերը, առանձնացրել ենք դրանցից մեկը, որը, ըստ մեզ, ունի առանձնակի ուշադրության կարիք, պահանջում է որոշակի վարքագիծ և էթիկական նորմեր, որոնք շատ կարևոր է իմանալ:

Հաշմանդամություն ունեցող երիտասարդներ

Հաշմանդամության վերաբերյալ պատկերացումները պատմության ընթացքում անընդհատ փոփոխվել են: Ըստ այդմ էլ տարբերվել են հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ և՛ հասարական ընկալումները, և՛ հանրային քաղաքականության շեշտադրումներն ու գաղափարաբանությունը:

Հաշմանդամության դիտարկման հայեցակարգերը բազմազան են՝ սկսած բարոյական-աստվածաբանականից մինչև հաշմանդամության սպեկտրային մոդել: Քաղաքականության ձևավորման տեսանկյունից կարևորվում են հաշմանդամության հետևյալ երեք մոդելները.

- **բժշկական մոդել**
- **սոցիալական մոդել**
- **մարդու իրավունքների վրա հիմնված մոդել:**

Յուրաքանչյուր մոդելի ստանձնմանը զուգահեռ փոփոխվել է հանրային քաղաքականության բովանդակությունը, շեշտադրվող առաջնահերթությունները և մոտեցումները: Այսպես, եթե բժշկական մոդելը հաշմանդամություն ունեցող անձին դիտարկում է նրա մարմնի, հոգեկան աշխարհի, մտավոր կարողությունների լիարժեքության տեսանկյունից և, հետևաբար, ձևակերպում հաշմանդամություն

ունեցող անձանց վերաբերող քաղաքականության դրույթները՝ ըստ բժշկական բնութագրիչների, ապա մարդու իրավունքների վրա հիմնված մոդելն առանցքային է համարում հաշմանդամություն ունեցող անձի իրավունքները և քաղաքականությունը, ձևավորում մարդակենտրոն և իրավահենք:

Ավելի մասնրամասն անդրադառնանք այս երեք մոդելներին.

Բժշկական մոդել

Հաշմանդամությունը դիտարկվում է անհատի խնդիր, որի պատճառը հիվանդությունը, տրավման կամ այլ առողջական խնդիր է, բնականից շեղվող երևույթ, որը պահանջում է հետևողական բժշկական միջամտություն:

Բժշկական մոդելը երբեմն անվանվում է նաև «անձնական դժբախտության» մոդել, քանի որ այն հաշմանդամությունը դիտարկում է հիմնովին բացասական լույսի ներքո: Այն խղճահարություն առաջացնող վատ իրավիճակ է, որը անձի և ընտանիքի համար անձնական դժբախտություն է համարվում: Հետևաբար, հաշմանդամությունը նորմայից շեղում է համարվում: «Անդամալույծ», «ինվալիդ» (ռուսերեն փոխառություն), «խեղված» տերմինները բժշկական մոդելի գերակայության արգասիք են:

Բժշկական մոդելի պարագայում հաշմանդամության շուրջ աշխատանքը դիտարկվում է «բուժելու» համատեքստում, այն է՝ անձի փոփոխությունը, որը նրան ամբողջապես առողջ լինելուն կառաջնորդի կամ, այսպես ասած, արդյունավետ բուժումը:

Այս մոդելի վտանգավորություններից մեկն այն է, որ այն դասակարգում է «առողջ մարմինը»՝ որպես գերադասելի, ավելի բարձր, քան հաշմանդամություն ունենալը, ինչն անդրադառնում է նաև անձի նկատմամբ հասարակական վերաբերմունքի, խտրականության դրսևորման վրա:

Քաղաքականության տեսանկյունից՝ հիմնական խնդիրը բժշկական խնամքն է համարվում, հետևապես՝ քաղաքականությունն ուղղված է առողջապահական խնդիրների լուծմանը՝ ոլորտում բարեփոխումների իրականացման միջոցով:

Սոցիալական մոդել

Հաշմանդամության սոցիալական մոդելը, որը հաճախ բնորոշվում է նաև՝ որպես փոքրամասնության մոդել, հաշմանդամությունը դիտարկում է ոչ թե որպես անձնական խնդիր, ինչպես բժշկական մոդելը, այլ՝ որպես հասարակական խնդիր, որի լուծումը պետք է լինի հասարակական փոփոխությունը և ոչ անհատի ձևափոխումը: Ըստ այս մոդելի՝ հաշմանդամությունը սոցիալական կերտվածք է, սոցիալական միջավայրի արգասիք:

Խնդրի կառավարումը պահանջում է սոցիալական գործողություն, այն հասարակության պատասխանատվությունն է՝ ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ հաշմանդամություն ունեցող անձիք կարող են լիարժեք մասնակցություն ունենալ հասարակական կյանքին, տնտեսական, քաղաքական և այլ ոլորտներում:

Խնդիրը մշակութային և գաղափարախոսական է, որը լայնածավալ գործողություններ է պահանջում անձերից, համայնքներից, հասարակությունից՝ սոցիալական փոփոխության հասնելու համար:

Սոցիալական մոդելը հստակ տարանջատում է դնում «անդամալույծ» և «հաշմանդամություն» տերմինների միջև՝ պարզաբանելով, որ անդամալուծությունը առողջական կամ ֆիզիկական/մտավոր կարգավիճակ է, մինչդեռ դրա մասին պատկերացումները տարբերվում են մշակույթից մշակույթ՝ այն դարձնելով սոցիալական երևույթ, ինչը բնորոշվում է հաշմանդամություն տերմինով:

Մարդու իրավունքների վրա հիմնված մոդել

Մարդու իրավունքների մոդելը, հիմնվելով սոցիալական մոդելի վրա, շեշտադրում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն օրենսդրությամբ ամրագրելու կարևորությունը, հետևաբար, հանրային քաղաքականության ձևակերպումն այնպես, որ երաշխավորվի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիիրավ կիրարկումն ապահովող միջավայր: Այս մոդելի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներն ու փորձառությունը պետք է մանրամասն ուսումնասիրել և ցանկացած որոշում կայացնել՝ հաշվի առնելով դրանք: Նման սկզբունքով առաջ շարժվելու դեպքում յուրաքանչյուր ռազմավարություն, ծրագիր կամ քաղաքականություն կնպաստի այնպիսի միջավայրի հաստատմանը, որտեղ յուրաքանչյուրը, անկախ իր հաշմանդամության կարգավիճակից, լիարժեք կմասնակցի հանրային կյանքի տարբեր ոլորտներում՝ կրթություն, զբաղվածություն, քաղաքականություն և այլն:

Ներկայիս զարգացող և զարգացած երկրներում գաղափարախոսական և քաղաքականության հիմքում հաշմանդամության՝ մարդու իրավունքների մոդելն է գերակշռում, քանզի այն հնարավորություն է տալիս հաշմանդամությունը դիտարկել ոչ թե անձնական տիրույթում կամ որպես սոցիալական երևույթ, այլ մարդու իրավունքների համատեքստում, այն է՝ ստեղծել այնպիսի պայմաններ, որտեղ յուրաքանչյուր անձ կարևորվում է իր արժանիքներով և առանձնահատկություններով, որտեղ միջավայրն է հարմարեցվում անհատի առանձնահատկություններին և ոչ անհատը՝ միջավայրին: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս անհատի ինքնառեալիզացմանը և հասարակական կյանքում ներգրավմանը՝ որպես ակտիվ ներդնող և ոչ միայն օգտվող:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը կարելի է մեկնաբանել հետևյալ փուլերով.



Վերևում արդեն իսկ խոսել ենք կարծրատիպերի մասին: Դուք քաջատեղյակ եք, որ կան հաշմանդամության կարծրատիպեր, որոնց հետևանքով մեր վարքագիծը կարող է լինել խտրական: Օրինակ՝ Երբ մենք մտածում ենք, որ հաշմանդամություն ունեցող անձը չի կարող աշխատել սպասարկման ոլորտում, մենք Արմենին, ով ունի լսողության խնդիր, չենք ընդունում աշխատանքի որպես մատուցող: Արդյունքում մեր կարծրատիպացված դիրքորոշման պատճառով մենք կիրառում ենք խտրական վարքագիծ: Այսպիսով, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանութան մեկնաբանման առաջին փուլը **խտրականությունն է**:

Եկեք սահմանենք՝ ինչ է խտրականությունը:

Խտրականությունը տարբերակման, բացառման, սահմանափակման, նախապատվության դրսևորում է, որը նպատակ է հետապնդում կամ հանգեցնում է որոշակի առանձնահատկություններով օժտված անձանց համար նվազ բարենպաստ իրավիճակի ստեղծմանը:

Պետք է նաև առանձնացնել հաշմանդամության հիմքով խտրականությունը, որը նշանակում է՝ իրական կամ ենթադրյալ հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որի նպատակը կամ

արդյունքը հանդիսանում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային եւ (կամ) ցանկացած այլ ոլորտում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսեւորումը եւ (կամ) մյուսների հետ հավասար հիմունքներով օրենքով սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման եւ (կամ) իրականացման արգելքը կամ ժխտումը:

Հաշմանդամության հիմքով խտրականությունը ներառում է նաեւ խելամիտ հարմարեցումների ապահովման մերժումը:

Օրինակ՝ X կազմակերպությունում Գոհարն ու Սաթենիկը աշխատում են, որպես հեռախոսավար, սակայն Սաթենիկը, ունենալով տեղաշարժման խնդիր, ստանում է ավելի շատ աշխատավարձ, քան Գոհարը: Այստեղ կարող ենք տեսնել հաշմանդամության հիմքով նախապատվություն, որը խտրականության ձև է:

Օրինակ 2՝ Համայնքապետարանում իրականցվում է հանրային քննարկում: Քննարկման դահլիճը երրորդ հարկում է և չկա վերելակ: Մանեն, ով օգտագործում է սայլակ, չի կարող մասնակցել հանրային քննարկմանը և արտահայտել իր կարծիքը: Սա հաշմանդամության հիմքով սահմանափակման օրինակ է:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը ենթադրում է խտրականության բացառում: Կան որոշակի մեխանիզմներ և լուծումներ, որոնք կիրառում ենք ավելի հավասար հասարակություն ունենալու համար.

- **Մատչելիություն**
- **Խելամիտ հարմարեցումներ**
- **Իրազեկում**
- **Իրավական պաշտպանություն**
- **Սոցիալական պաշտպանություն**
- **Հասարակության վերաբերմունքի հետ աշխատանք**

Իրավական և սոցիալական պաշտպանությունը ենթադրում է միջազգային և տեղական իրավական փաստաթղթեր և ակտեր, պետության կողմից գործարկվող սոցիալական պաշտպանության համակարգ և այլ կառույցների կողմից սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրեր, որոնց շնորհիվ պաշտպանվում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները:

Իրազեկումը և հասարակության վերաբերմունքի հետ աշխատանքը այն տեղեկատվական արշավները, դասընթացները, հրապարակված տեղեկատվական նյութերը և բոլոր այլ տեղեկատվական գործիքներն են, որոնք տեղեկացնում, ուսուցանում կամ աշխատում են հասարակության լայն շերտերի կարծրատիպերի հետ: Հատկանշական է, որ հաշմանդամություն ունեցող անձանց հավասար հիմունքներով հասարակական կյանքում ներգրավված լինելու համար մեծ ուշադրություն է պետք դարձնել մատչելիությանը և խելամիտ հարմարեցումներին:

Հեղինակ՝ Սոնա Մանուկյան

Ահա և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության երկրորդ փուլը՝ **մատչելիությունը**:

Մատչելիության մասին խոսելիս չենք կարող առանձնացնել ոլորտներ, որտեղ պետք է կիրառել հարմարեցումներ: Մատչելիությունը ենթադրում է համընդհանուր մատչելի միջավայր հաշմանդամություն ունեցող անձի համար: ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոնվենցիան սահմանում է «համընդհանուր դիզայն» տերմինը, որը նշանակում է՝ ապրանքների, միջավայրերի, ծրագրերի ու ծառայությունների ձևավորում, որը դրանք առավելագույնս գործածելի է դարձնում բոլոր մարդկանց համար՝ առանց դրանց հարմարվելու կամ հատուկ ձևավորման անհրաժեշտության: «Համընդհանուր ձևավորում»-ն ընդգրկում է հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի համար նախատեսված օժանդակող պարագաները դրանց անհրաժեշտության դեպքում:
Սա մատչելիության իդեալական ձևն է, սակայն առօրյա կյանքում դեռ կարող ենք խոսել միայն «հարմարեցնելու» մասին, և ոչ՝ համընդհանուր մատչելի միջավայրի:

Կան մի քանի ոլորտներ, որտեղ մատչելության խնդիրը բավականին հրատապ է, այդպիսիք են՝ **ֆիզիկական միջավայրի մատչելիությունը**: Սա ենթադրում է ճիշտ կառուցված թեքահարթակներ, բռնակներ, որոնք օգնում են տեղաշարժման խնդիր ունեցող անձանց, աստիճաններին դեղին գծանշումներ, ձայնային լուսացույցեր, գոգավոր անհարթություններ հատակին, որոնք օգնում են տեսողության խնդիրներ ունեցող անձանց, փոխադրամիջոցներում էկրանների առկայությունը լսողության խնդիրներ ունեցող անձանց համար: Թվարկվածները որոշ օրինակներ են, սակայն ֆիզիկական մատչելիությունը կարող է ենթադրել այլ հարմարեցումներ:

Կարևոր է առանձնացնել **տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը**: Այս ոլորտում պետք է խոսել մասնավորապես ժեստերի լեզվի և բրայլյան համակարգիմասին:

Մատչելիության ձև է **հեշտ ընթերցվող (easy to read)** նյութերը, որոնք ձևաչափ են մտավոր խնդիրներ ունեցող անձանց համար և պարունակում են պարզ տեքստի և պատկերի համադրություն:

Խելամիտ հարմարեցումը պետք է տարբերակել մատչելիությունից: Խելամիտ հարմարեցումների կիրառումը անհրաժեշտ և համապատասխան փոփոխությունների և հարմարեցումների (շտկումների) կատարում է, որոնք համաչափ են, չեն առաջացնում անհարկի բեռ և ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի մարդու իրավունքներից և հիմնական ազատություններից մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվելուն:
Օրինակ՝ Հրանուշն ունի թեթև մտավոր խնդիր, աշխատում է պահածոների գործարանում: Անհրաժեշտ է ամեն օր նրան տալ հստակ առաջադրանք, որպեսզի կարողանա կատարել աշխատանքը:

Սա խելամիտ հարմարեցման ձև է, քանի որ այս դեպքում անհրաժեշտ է լինում ամենօրյա վերահսկողություն: Սա օգնում է հաշմանդամություն ունեցող անձին հավասարապես աշխատել:

Կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ եթե մատչելիությունը նախատեսված է որոշակի խմբի համար (թեքահարթակները՝ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար կամ ձայնային լուսացույցերը՝ տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար), ապա խելամիտ հարմարեցումները մեկ անձի համար են և կիրառվում են անհատական մոտեցմամբ: Այստեղ կարևոր է անդրադառնալ նաև սոցիալական միջավայրի մատչելիությանը, որը ենթադրում է հասարակության կողմից հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ պատշաճ վերաբերմունք:

Էթիկական նորմեր

Կան որոշակի էթիկական նորմեր, որոնց պահպանումը հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցվելիս շատ կարևոր են:

Դրանք են՝

1. Անձի հաշմանդամության մասին ենթադրություններ մի արեք:
2. Ողջունելիս հաշվի առեք անձի աառնաձնահատկությունները: Եթե անձը ունի տեսողության խնդիր, մի մեկնեք ձեռքը, եթե օգտագործում է սայլակ, ապա կքանստեք, որպեսզի աչքերի կոնտակտը նույն մակարդակի լինի:
3. Հաղորդակցվեք հաշմանդամություն ունեցող անձի հետ, այլ ոչ ուղեկցորդի:
4. Օգտագործեք արտահայտություններ և բառեր: Խուսափեք ժեստերից, մատներով ցույց տալուց, տեսողության խնդիր ունեցողին դա անհարմարություն կպատճառի, իսկ լսողության խնդիր ունեցողը կշփոթի ժեստերի լեզվի հետ:
5. Մի նույնացրեք աջակցող սարքերը անձի հետ: Սայլակը, սպիտակ ձեռնափայտը ընդամենը աջակցող միջոցներ են, որոնք օգտագործում են հաշմանդամություն ունեցող անձինք:
6. Մի դիպչեք հաշմանդամություն ունեցող անձի աջակցող սարքերին: Սա ենթադրում է, որ պետք չէ վարել հաշմանդամություն ունեցող անձի սայլակը առանց թույլատրության կամ վերցնել և ուսումնասիրել ձեռնափայտը:
7. Առաջարկեք Ձեր օգնությունը, երբ դրա կարիքը կա: Հաճախ մեզ թվում է, որ մենք պարտավոր ենք օգնել հաշմանդամություն ունեցող անձանց, մինչդեռ մենք երբեք չենք «գուշակի» ինչ է հարկավոր դիմացինին:
8. Տեղյակ եղեք մատչելի միջավայրի մասին: Մենք կկարողանանք օգնել հաշմանդամություն ունեցող անձին միայն այն դեպքում, եթե իմանանք՝ թե ինչ միջոցներ է պետք ձեռնարկել մատչելիության համար, ինչ են թեքահարթակները, դեղին գծանշումները և այլն:
9. Միշտ ցուցաբերեք հարգանք: Անկախ հաշմանդամության տեսակից մարդը բարձրագույն արժեք է և մտավոր, հոգեսոցիալական կամ

ֆիզկական խնդիրները չպետք է հանդիսանան խոչընդոտ:

10. Մի համեմատեք յուրաքանչյուր հաշմանդամություն ունեցող անձի ծեր մարդու հետ: Հաճախ մենք շփոթում ենք, որ յուրաքանչյուր անձ ունի տարբեր առնձնահատկություններ և կարիքներ:

Այստեղ Ձեզ ենք ներկայացնում տերմիններ, որոնք սխալ է օգտագործել հաշմանդամություն ունեցող անձանց հետ հաղորդակցվելիս, և դրանց փոխարինող ճիշտ ձևերը.

Սխալ է ասել	Ճիշտ է ասել
Հաշմանդամ / Ինվալիդ	Հաշմանդմաություն ունեցող անձ
Կույր	Չտեսնող / Տեսողության խնդիր ունեցող
Խուլ	Լսողության խնդիր ունեցող
Լալ	Չլսող
Աուտիկ	Աուտիզմ ունեցող անձ
Դաուն	Դաունի համախտանիշ ունեցող անձ
Սալյակին գամված	Սայլակ օգտագործող մարդ
Դեբիլ	Մտավոր խնդիր ունեցող անձ
Բնածին դեֆեկտ / Արատ ունեցող	Ի ծնե/ ձեռքբերովի հաշմանդամություն
Հատուկ խնամքի կարիք ունեցող	Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ
Տառապում է ՄՈՒԿ-ով	Ունի մանկական ուղեղային կաթված
Հոգեկան հիվանդ	Հոգեկան առողջության խնդիր ունեցող

Եվ վերջապես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության երրորդ փուլը՝ **ներառում**:

Ներառումը սոցիալական տերմին է՝ խտրականության բացառմամբ ստեղծված միջավայր, որտեղ լիարժեք կյանքով են ապրում բոլորը: Ներառման մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ այն համընդհանուր է, այսինքն վերաբերում է յուրաքանչյուրին՝ չառանձնացնելով ոչ մի խմբի: Առանց խտրականության բացառման և մատչելի միջավայրի չենք կարող խոսել ներառման մասին:

Կարևոր է նաև հասկանալ ներառում և ինտեգրում տերմինների տարբերությունը: Ինտեգրումը այն գործընթացն է, երբ խումբը չի առանձնացվում հասարակությունից, սակայն ձևավորվում է որպես հատուկ խումբ միևնույն հասարակության մեջ: Օրինակ՝ հաշմանդամություն ունեցող երեխան մնացյալ երեխաների հետ հավասար հաճախում է դպրոց, բայց նրա հետ աշխատանքը տարվում է առանձին, այլ դասասենյակում: Ներառումը հասարակության յուրաքանչյուր անդամի հավասարապես ընդգրկումն է հասարակական կյանքին: Օրինակ՝ հաշմանդամություն ունեցող և չունեցող երեխաները սովորում են միևնույն դասարանում:



Ներառման կարևոր բաղադրիչ է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցայնությունը որոշումների կայացման գործընթացին: Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցայնությունը չի կարող իրականացվել առանց մատչելի միջավայրի և կարծրատիպերից զերծ վերաբերմունքի: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ մասնակցայնության գործիքները, մշակված ձևաչափերը լինեն մատչելի, իսկ որոշում կայացնողների վերաբերմունքը ոչ խտրական: Կարևոր է նաև «ոչինչ մեզ համար առանց մեզ» սկզբունքը, որը ենթադրում է, որ ցանկացած որոշում, որը կայացվում է հաշմանդամություն ունեցող անձանց մասին պետք է լինի կարիքահեն և հաշմանդամություն ունեցող անձանց հետ համատեղ նախագծված:

Միայն հավասար հնարավորություններ տրամադրելու դեպքում կարող ենք ասել, որ լիովին լսելի ենք դարձնում հասարակության յուրաքանչյուր անդամի ձայնը:

Հեղինակ՝ Սոնա Մանուկյան

Օգտագործված աղբյուրներ՝

http://www.irtek.am/views/act.aspx?aid=150060

https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271

https://www.yerevan.am/am/avagani/

http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1305&lang=arm

http://kasa.am/wp-content/uploads/2017/12/YLD.pdf

https://opentextbc.ca/socialpsychology/part/stereotypes-prejudice-and-discrimination/

ՀՀ 2021-2025թթ.-ի Երիտասարդական պետական քաղաքականության նախագիծ https://www.e-draft.am/projects/3268

Էրազմուս «Ներառում եվ բազմազանություն» ռազմավարություն

«Ներառելով» նախագծի կրթական նյութ/ փորձագետ Լուսինե Սաղումյան

Ծրագիրն իրականացվում է «Ուղի դեպի» ներառական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության կողմից «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագրի շրջանակում: Նյութի բովանդակության համար պատասխանատու է միայն ստեղծողը: Ձեռնարկում արտահայտված տեսակետները/բովանդակությունը կարող են չհամընկել Շվեդիայի կառավարության տեսակետների հետ:

«Աջակցություն քաղաքացիական հասարակությանը՝ հանուն բարեփոխումների վրա ներգործության» ծրագիրն իրականացվում է Եվրասիա համագործակցություն հիմնադրամի կողմից Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

2022